

Ռ. Ս. ԻՇԽԱՆՈՒՄ

ԲԼԵՉ ԴԸ ՎԻԺՆԵՐԻ „TRAICTE' DES CHIFFRES“
(«ՁԵՌՆԱՐԿ ԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ») ԳԻՐՔԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆՈՎ

Հայկական տպագրության առաջին հարյուրամյակը՝ 16-րդ դարը հասկանալի պատճառով մեր մատենագիտության ուշագրության կենտրոնում է եղել: Չնայած գրան, այդ դարում կատարված մեսրոպատառ տպագրությունների մասին մատենագիտության յովյալները հարստացել են ոչ միանգամից, հետզհետե և բավական զանգաղ: Հիշենք, օրինակ, որ յոթանասուն—ութսուն տարի առաջ հայկական տպագրության սկիզբը համարվում էր 1565-ը (արդարյան Սաղմոսի տպագրության թվականը): Այնուհետև պարզվեց, որ գրանից առաջ հրատարակված են եղել Հակոբի գրքերը, իսկ ավելի ուշ խոսվեց Թեոսեոս Ամբրոսիոսի և Գ. Պոստելի գրքերի մեջ եղած մեսրոպատառ տպագիր հատվածների մասին:

Սրանից մեկ-երկու տարի առաջ 16-րդ դարում կատարված հայատառ տպագրությունները հաշվվում էին տասնութ անուն, այնուհետև նրանց թիվը դարձավ 23¹, ապա՝ 24²:

Իրանցից 18-ը հայերի կողմից կամ հայերի միջոցով են կատարվել (Հակոբի, Աբգարի, Տերգնցու և Սուլթանշահի), իսկ 6-ը՝ օտարազգիների հրատարակած կամ հեղինակած գրքեր են (Ամբրոսիոսի, Պոստելի, Ռ. Գրանժոնի, Լ. Թուրնայգերի, Պետրոս Գետանոս Պալմայի և Bry-ի): Պետք է ասել, որ, 16-րդ դարում կատարված հայատառ տպագրությունների մատենագիտական շարքը վերջերս լրացվում է զխավորապես ի հաշիվ օտարազգի հեղինակների կամ հրատարակիչների գրքերի: Նման մի ավելացում անելու առիթ է այժմ տվել ամերիկահայ գրասեր և գրահավաք Ալբերտ Նալբանդյանը, որը օրերս մեզ է ուղարկել իր հավաքածուի մեջ պահվող մի հնատիպ գրքի էջերի լուսապատճենը: Ահա այդ գրքի անվանաթերթի նկարագրությունը:


TRAICTE' DES CHIFFRES, OV SECRETES MANIERES D'ESCRIRE:
PAR BLAISE DE VIGENERE, BOVRBONNOIS. A. PARIS, Chez ABEL
L'ANGELIER, au premier pillier de la grand' Salle du Palais. M. D.
LXXXVI. AVEC PRIVILEGE DV ROY.

Անվանաթերթի կենտրոնում գրված պատկեր-տպագրանիշի շուրջը գրված է NEC MACRVM SACRIFICABO. SACRVM PINGVE DABO.

1 Տե՛ս մեր հոդվածը, «Տեղեկագիր» (հաս. գիտ.) ՀՍՍՌ ԳԱ, 1963, № 12, էջ 83—90:

2 «Էջմիածին», 1964, № 4: Այս հաղորդման մեջ խոսքը Պետրոս Գետանոս Պալմայի «Paradigmata de quatuor linguis orientalibus praecipuis» լատիներեն գրքի մասին է (Փարիզ, 1596), ուր կա փայտափորագիր հայատառ տպագրություն (ի դեպ, նաև՝ լատինատառ հայերեն): Հաղորդման մեջ չի նշված գրքի հեղինակը և թյուրիմացաբար գիրքը բնութագրված է իբրև Փարիզում կատարված առաջին հայկական տպագրություն (հայտնի է նույն բաղադրում, ղստ ավելի վաղ՝ Պոստելի տպագրած գիրքը, նույնպես հայերեն տառերի փայտափորագիր նմուշներով):

Այդպիսով, Բլեզ դը Վիժների³ «Ձեռնարկ գրերի մասին» (կամ՝ «Ձեռնարկ ծածկագրերի մասին») գիրքը տպագրվել է 1586-ին, Փարիզում: Այն գրված է հին ֆրանսերենով, բաղկացած է 686 էջից, ըստ որում, համարակալված են ոչ թե էջերը, այլ թերթերը (343 թերթ): Կրթում տպագրված են քաղցրական, ասորական, արաբական, հունական, հայկական, վրացական, հաբեշական և այլ այբուբեններ: Ներկայացված յուրաքանչյուր այբուբենի և տվյալ լեզվի ու ժողովրդի մասին հակիրճ ծանոթություններ են տրվում:



Նկ. 1

Հայերին նվիրված հատվածը զետեղված է 309—313 էջերում, և հենց վերջին 312—313-րդ էջերում էլ դրոշմված են հայկական այբուբենի երկու աղյուսակներ՝ մեկը հիմնականում զլխագրերի (նկ. 1), մյուսը՝ բոլորագրերի (նկ. 2) (թեև առաջին աղյուսակում կան նաև ոչ-զլխագիր տառեր, և հակա-

³ Բլեզ դը Վիժները (1523—1592) ֆրանսիացի հեղինակ է և թարգմանիչ, եղել է նաև Հռոմում ֆրանսիայի հյուպատոսի քարտուղար:

ոսկր)։ Հաճախ տրված են մի տառի մի քանի տարրերը նմուշներու Առաջին աղ-
յուսակում յուրաքանչյուր տառի տակ տրված է նրա լատինական համարժեքը
կամ բացատրությունը (թեև՝ ոչ միշտ ճիշտ), երկրորդում տրված են հայկական
տառերի անուններու Անշուշտ, աղյուսակներում հաջող չին մեարույցան մի շարք
տառերի գծագրությունները, իսկ մի քանիսը անճանաչելիորեն հեռացած են

յուրաքանչյուր տառատեսակից մի հատ կա միայն, որով անհնար է դառնում համեմատություն կատարել միևնույն տառատեսակի տարբեր դրոշմվածքների միջև, սակայն առաջին աղյուսակի լատինական միևնույն տառերից (օր.՝ S, C, Z, I և այլն) մի քանի հատ կան, և նկատվում է, որ նրանցից յուրաքանչյուրը տարբերվում է մյուսից (այսինքն՝ նույն տառի մի դրոշմվածքը մյուսից). դա ցույց է տալիս, որ աղյուսակը ոչ թե շարվածք է, այլ ամբողջական փորագիր դրոշմվածք:

Փորագիր տախտակներով կատարված տիպը պայմանականորեն է տպագրություն համարվում, սակայն ի տարբերություն այլ լեզուներով կատարված այդ կարգի բազմաթիվ հրատարակությունների, հայկական տառերով նման հին տպագրությունները խիստ հազվագյուտ են, և նրանք, անշուշտ, պիտի դրվեն մեսրոպատառ մյուս հնատիպերի շարքը: Բացի այդ, կարևոր է, որ հայկական այբուբենի փորագիր այս տախտակը օգտագործված է սովորական տպագրությամբ (շարժական տառերով) լույս բնծայված լրբում: Այդպիսով, այժմ 16-րդ դարի մեսրոպատառ տպագրությունների քանակը դառնում է 25, որը կարծում ենք, նույնպես վերջին սահման համարվել չի կարող:

Մեր բանասերները (Թեոդիկ, Գ. Լևոնյան և ուրիշներ) 16-րդ դարում Փարիզում տպագրված մի գիրք են նշում, բայց ահա պարզվում է, որ դրանք երեքն են, այն է՝ Գ. Պոստելի «Linguarum»-ը, որը տպագրվել է 1538-ին⁴, Պետրոս Գետանոսի «Paradigmata»-ն (1596 թ.) և Վիժների ներկա գիրքը: Ուշագրավ է, որ փարիզյան այս երեք տպագրությունների մեջ էլ մեսրոպատառ հատվածները փայտափորագիր դրոշմվածք են: Զարբանալյանը նշում է նաև Փարիզում 1472 թվականին տպագրված հայատառ հատված ունեցող մի գիրք («Պատմ. հայկ. տպագր., էջ 8»), որն ինքը չի տեսել⁵:

Վերջում ուզում ենք ուշադրություն հրավիրել նաև Բլեզ դը Վիժների «Ձեռնարկ տառերի մասին» գրքի մեջ հայերին նվիրված հատվածի բովանդակության վրա, որ հետաքրքրական է իրեն բնորոշական հայագիտության վաղ շրջանի նմուշ:

Այդ հատվածը սկսվում է հունական այբուբենին նվիրված մասից հետո և ունի «Armeniens» ենթավերնագիրը: Հունական այբուբենի հերթականությունն ունեցող արևելյան այբուբեններից հայկականը բերվում է առաջինը: Նախ տեղեկանք է տրվում հայ ժողովրդի մասին, ասվում է, որ բացի Մեծ և

⁴ Ըստ Զարբանալյանի («Պատմություն հայկական տպագրության», էջ 35—36) Գ. Պոստելի գիրքը տպագրվել է Ամբրոսիոսի «Introductio»-ից հետո: Զարբանալյանի աշխատության վերջում տրված մատենագիտական ցանկի մեջ էլ Ամբրոսիոսի գիրքը նախորդում է Պոստելի գրքին: Մաշտոցի անվան մատենադարանն ունի Ամբրոսիոսի գիրքը, որի տիտղոսաթերթին կարդում ենք 1539 թվականը: Ըստ այդմ, Լթև հավատանք Զարբանալյանի գրածներին, Պոստելի գիրքը պետք է տպված լինի 1539-ից հետո: Բայց սրան հակասում է Պոստելի գրքի հրատարակման 1537 թվականը, որը նույն Զարբանալյանն է տալիս: Պոստելի գրքի լուսապատճենի վրա (որ ունի Ալ. Մյասնիկյանի անվ. գրադարանը) կարդում ենք 1538 թվականը:

⁵ Գ. Լևոնյանը («Հայ գիրքը և տպագր. արվեստը», 1958, էջ 58) Զարբանալյանի հիշատակած այս գիրքը փորձում է նույնացնել Պոստելի «Linguarum»-ի հետ: Սակայն նրա այն փաստարկը, թե Զարբանալյանը հրաժարվել է այդ գրքի գոյության գաղափարից և նրա մասին չի հիշատակել 1895-ի իր «Հայ տպագրության պատմության» մեջ ճիշտ չէ, քանի որ հիշյալ աշխատության մեջ 8-րդ էջում Զարբանալյանը խոսում է 1472-ի այդ ենթադրյալ հրատարակության մասին:

Փոքր Հայքից՝ հայերն ապրում են նաև մահմեդական աշխարհի այլ մասերում: Նշվում է հայերի և մահմեդականների հաշտ համակեցությունը, բոստ ուրում, հայերը բնութագրվում են իբրև խաղաղասեր, անմիջական (անկեղծ) և բարեհամբույր ժողովուրդ: Այնուհետև, խոսվում է հայերի տարբեր զբաղմունքների մասին. հայերը որակվում են իբրև Արևելքի ամենալավ գինեգործներ ու բանջարաբույծներ: Խոսվում է հայերի, իբրև հմուտ առևտրականների մասին, խմբավորվում են մի շարք ապրանքներ, որոնց առևտրով հայերը հատկապես շատ են զբաղվում: Ուշագրավ է հայ խոշաների զգեստի մանրամասն նկարագրությունը, որ այսօր ազդարարական լուրջ արժեք կարող է ունենալ:

Կան նաև որոշ ոչ-ճիշտ տեղեկություններ հայերի մասին (օրինակ, հայերը չամարվում են արամեացիներից սերված):

Աղբյուրագիտական տեսակետից դուրկ չէ հետաքրքրությունից այն, որ ճիշատակվում են մի քանի եվրոպացի հեղինակներ (գլխավորապես ճանապարհորդներ), որոնք գրել են Հայաստանի և հայերի մասին, ինչպես Ժեֆրուա դը Վիլհարդուն (Geoffroy de Villhardvyn), Պլինիուս (Plinius), Մարկո Պոլո, Իոսաֆո Բարբարո (Iosapho Barbaro): Նշվում են սրանց երկասիրությունները այն մասերը, որոնք նվիրված են հայերին:

Р. А. Ишханян

КНИГА БЛЕЗ де ВИЖНЕРА „TRAICTE DES CHIFFRES“ С ТАБЛИЦАМИ АРМЯНСКОГО АЛФАВИТА

Р е з ю м е

Начало армянского книгопечатания—16-й век всегда был в центре внимания армянских книговедов и библиографов. Немало труда было приложено для обнаружения изданных в этом столетии армянских книг, а также книг на европейских языках, но имеющих армянские тексты (или таблицы армянского алфавита). До настоящего времени было известно 18 таких изданий. За последние два года стараниями книговедов (см., например, «Известия» АН Арм. ССР (обществ. науки), 1963, № 12, стр. 83—90) количество таких изданий было доведено до 24-х. Однако, оказывается, и это не было пределом.

В настоящей статье речь идет о книге французского автора Блез де Вижнера (1523—1592) «Traicte des chiffres», изданной в Париже, в 1586 году (написана на старофранцузском языке). В книге помещены таблицы арабского, сирийского, армянского, грузинского, абиссинского и других алфавитов. На страницах 309—313 имеется специальный раз-

6 Մեծ և Փոքր Հայքերը ճիշատակվում են մի քանի անգամ, որը մի ավելորդ ապացույց է այն բանի, որ այդ երկրամասերի՝ իբրև հայ ժողովրդի դարավոր երկրի բմբուսումը եղել է նաև 387 թվականի բաժանումից հետո, ինչպես և առհասարակ հայ պետականության կորուստից հետո շատ ավելի ուշ շրջանում, անկախ այն բանից, թե երբ և ով է իշխել ու ինչ սահմաններ է զբաղեցրել Մեծ և Փոքր Հայքերում:

дел, посвященный армянам. Здесь даются сведения об армянском народе и его языке. Некоторые из этих сведений сегодня могут представить интерес для наших этнографов и историков. В разделе названы также авторы, главным образом, путешественники, писавшие об Армении и армянах. В конце раздела помещены две таблицы с армянским алфавитом (ил. 1 и 2).

Таким образом, в настоящее время армянское книгопечатание 16 века уже представлено 25-ю изданиями; 18 из них—плод труда армянских печатников, остальные семь напечатаны европейцами. Эти последние, по-видимому, можно считать самыми ранними изданиями по арменистике.